ԹԵՄԱ 7

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԴԱՍ 7.1. Աշխարհագրական միջավայր, բնական պայմաններ և ռեսուրսներ

1. Հարկ է նշել, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանները, աղքատ ռեսուրսները բացասաբար են անդրադառնում հասարակության զարգացման վրա:

Աշխարհագրական միջավայրի մասին աշխարհագետներն ունեն տարբեր տեսակետներ: Ոմանք կարծում են, որ այն արդեն լրիվ յուրացված է մարդու կողմից և իր նախնական տեսքով արդեն գոյություն չունի: Մյուսները կարծում են, որ մարդը դեռ ամբողջությամբ չի յուրացրել իրեն շրջապատող բնական միջավայրը: Միջավայրի դերի հարցում էլ մոտեցումները տարբեր են. ոմանք գերագնահատում, ոմանք թերագնահատում են աշխարհագրական միջավայրի դերը հասարակության զարգացման գործում: Մարդկային հասարակության ողջ պատմությունը բնության, աշխարհագրական միջավայրի հետ փոխազդեցության պատմություն է: Մարդկությունը, փորձելով մշտապես իր կարիքներին հարմարեցնել բնությունը, մեծ վնաս է հասցրել բնությանը, և մարդածին ազդեցության հետևանքով աշխարհագրական միջավայրը ենթարկվել է դեգրադացիայի՝ վատթարացման:

2. ***Սպառվող ռեսուրսներն*** իրենց հերթին բաժանվում են չվերականգնվողների և վերականգնվողների: Չվերականգնվող են բոլոր օգտակար հանածոները՝ բացի հանքային աղերից: Վերականգնվող են հողային, բուսական, կենդանական, ռեկրեացիոն ռեսուրսները:

Դրանց մեջ էլ կան արագ (բույսերի, կենդանիների որոշ տեսակներ) և դանդաղ վերականգնվող (օրինակ՝ հողը) ռեսուրսներ:

Անսպառ ռեսուրսներ են օդը, ջուրը, երկրաջերմային, կլիմայական և տիեզերական ռեսուրսները: Անսպառ անվանումը պայմանական է. շատ տեսակներ քանակապես անփոփոխ մնալով, կարող են սպառվել որակապես, այսինքն՝ կորցնել իրենց գլխավոր հատկանիշը՝ օգտակարությունը:

3. Տարածքի մեծությունը և ձևը (ուրվագիծը) տնտեսության զարգացման ու տեղաբաշխման կարևոր գործոն են, բոլոր ռեսուրսների իրական կրողը: Տարածքային ռեսուրսների «ավելցուկ» ունեն ՌԴ-ն, Կանադան, Բրազիլիան,

«դեֆիցիտ»՝ ՀՀ-ն, Բելգիան, Շվեյցարիան և այլն:

Օգտակար հանածոները արդյունաբերության շատ ճյուղերի՝ վառելիքային արդյունաբերության, մետալուրգիայի, քիմիական, շինանյութերի արդյունաբերության համար անփոխարինելի են:

Օգտակար հանածոները քարոլորտի ռեսուրսների շարքին են դասվում, որոնց աշխարհագրական տարածումը բացատրվում է անցյալի կլիմայական պայմաններով և երկրաբանական զարգացման պատմությամբ ու օրինաչափություններով: Վառելիքային, մետաղական և ոչ մետաղական (քիմիական հումք, շինանյութեր) հանածոներն ունեն անհավասարաչափ տեղաբաշխում: Կորդիլիերաները, Ուրալը, Հարավային Աֆրիկան, Կանադան, ԱՄՆ-ը հարուստ են հանքային ռեսուրսներով: